Funded by the European Union

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ - 2026

Սույն հրապարակումը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Օգտագործված հապավումներ	4
Ընդհանուր ակնարկ	5
Կրթության ոլորտի բյուջեն	7
Կրթության ոլորտի բյուջեի աճ	8
Կրթության ոլորտի բյուջետային ծրագրեր	9
Կրթության ոլորտի արդյունքային ցուցանիշներ	13

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԵՄ	Եվրոպական միություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԲՏՃՄ	Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Կրթության ոլորտի բոլոր ծրագրերը, բացառությամբ տարբեր գերատեսչությունների կողմից իրականացվող մասնագիտական վերապատրաստումների և կարողությունների բարելավման ներոլորտային/գերատեսչական ծրագրերի, իրականացվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) կողմից:

- Ըստ ՀՀ կառավարության 2026 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագրի՝ կրթությունը շարունակում է դիտարկվել որպես մարդու հիմնարար իրավունք և պետական քաղաքականության կարևոր ուղղություն, որի շրջանակում պետության պարտավորությունն է ապահովել համընդհանուր, հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն:

- Կրթությունը մարդու հիմնարար իրավունքն է, և պետության պարտավորությունն է ապահովել համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն: Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է՝ որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը, ուստի այն դասվում է կառավարության ծրագրի գերակայությունների շարքում:

- 2026 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել կառավարության 2021-2026 թվականների ծրագրից և ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրից բխող գործողությունների ծրագրով սահմանված միջոցառումները:

- Կրթության ոլորտի գլխավոր հիմնախնդիրը կրթական համակարգի բոլոր մակարդակներում կրթության հասանելիության, որակի և արդյունավետության բարձրացումն է, դրանց համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին, մատչելի, ներառական և հասանելի կրթության ապահովումը բնակչության բոլոր խավերի համար: Այդ նպատակներին հասնելու համար շարունակվելու են իրականացվել մեծածավալ ծրագրեր՝ կրթական բոլոր մակարդակներում:

- Սույն պարզեցված ուղեցույցում կրթության ոլորտի բյուջեն նույնականացվել է կրթության և գիտության ոլորտում իրականացվող բոլոր բյուջետային ծրագրերի ծախսերի հանրագումարի հետ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

- 2026 թվականի պետական բյուջեն նախատեսվել է եկամուտների գծով 3,090.9 մլրդ դրամ, ծախսերի գծով 3,627.6 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով 536.8 մլրդ դրամ կամ համապատասխանաբար ՀՆԱ-ի 25.9, 30.4 և -4.5 տոկոսը:

- Կրթության ոլորտին 2026 թվականին կուղղվի 383.0 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ կավելանա 58.2 մլրդ դրամով կամ 17.9 տոկոսով:

- ՀՆԱ-ի նկատմամբ կրթության ծրագրերին ուղղված ծախսերի կշիռը 2026 թվականին կկազմի 3.2 տոկոս՝ 2021-2025 թվականների 2.4 տոկոս միջին մակարդակի պայմաններում, իսկ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ՝ 10.6 տոկոս՝ նախորդ 5 տարիների 8.5 տոկոս միջին մակարդակի պայմաններում:

- 2021-2026թթ. կրթության ծրագրերի ֆինանսավորման միջին տարեկան աճը կազմում է 10.6 տոկոս և զիջում է նույն ժամանակահատվածում պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճը 0.8 տոկոսային կետով:

- Կրթության ոլորտում պետական քաղաքականությունը 2026-ին կիրականացվի 15 բյուջետային ծրագրերի միջոցով:

- Կրթական ծրագրերի շարքում ֆինանսավորման ծավալով առաջատարը «Հանրակրթական և նախադպրոցական ծրագրերի հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագիրն է, որին հաջորդում են «Հանրակրթության», «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների», «Կրթության որակի ապահովում» ծրագրերը: Այս ծրագրային ուղղությունները միասին կապահովեն ոլորտի ֆինանսավորման աճի մոտ 85.5 տոկոսը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՆ

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Կրթության ոլորտի բյուջեն և դրա տարեկան աճը, 2020-2026թթ., (%)



- 2026 թվականին կրթության ոլորտում իրականացվող ծրագրերին կուղղվի 383.0 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է շուրջ 58.2 մլրդ դրամով կամ 17.9 տոկոսով: 2026 թվականին կրթության ֆինանսավորման ծավալները 2020 թվականի մակարդակը կգերազանցեն մոտ 2.5 անգամ:

- Պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ կրթության ոլորտի բյուջետային ծախսերի կշիռը 2026 թվականին կկազմի 10.6 տոկոս՝ 2025 թվականի 9.8 տոկոսի և 2020-2025 թվականների շուրջ 8.4 տոկոս միջին մակարդակի պայմաններում: Սա վկայում է, որ կրթության ոլորտի մասնաբաժինը պետական բյուջեի ծախսերում 2026 թվականին շարունակում է աճել: 2021-2026 թվականներին կրթության բյուջե/բյուջետային ծախսեր հարաբերակցության միջին մակարդակը կկազմի 11.5 տոկոս:

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Կրթության ոլորտի բյուջեի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում և ՀՆԱ-ում, 2020-2026թթ., (%)



- Կրթության ծախսերի միջին տարեկան աճը գերազանցում է պետական բյուջեի համապատասխան ցուցանիշը: 2021-2026 թվականներին պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճը կկազմի 11.5 տոկոս՝ կրթության բյուջեի 16.9 տոկոս մակարդակի պայմաններում: Արդյունքում, կրթության ոլորտի տարեկան միջին աճի տեմպը 5.4 տոկոսային կետով կգերազանցի պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճին:

- ՀՆԱ-ի նկատմամբ կրթության ծախսերը 2026 թվականին կկազմեն 3.2 տոկոս՝ նախորդ տարվա 3.0 տոկոսի համեմատ աճելով 0.2 տոկոսային կետով: Այսպիսով, 2026 թվականին կրթության ոլորտի ֆինանսավորումը ոչ միայն անվանական արտահայտությամբ է աճում, այլև ավելանում է դրա կշիռը ինչպես պետական բյուջեի ընդհանուր ծախսերում, այնպես էլ ՀՆԱ-ի նկատմամբ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԸ

- Կրթության ոլորտի ֆինանսավորման ծավալները 2021-2025թթ. դրսևորել են կայուն բարձր աճի տեմպեր: Գծապատկերում ընդգրկվել են այն ոլորտները, որոնք ունեն համեմատաբար բարձր կշիռ:

- Ըստ գործառական դասակարգման կրթության ոլորտը 2026 թվականին կկազմի 9.9 տոկոս և զիջում է սոցիալական պաշտպանության և պաշտպանության ոլորտներին:

- Ստորև գծապատկերից երևում է, որ 2026 թվականին կրթության ծախսերի աճը 2025 թվականի համեմատ կկազմի 11.9 տոկոս և երկրորդն է ընտրված ոլորտների աճերի համեմատությամբ: Նկատենք, որ 2024-ին կրության ծախսերի աճը, մյուս ոլորտների համեմատ եղել է առաջատար:



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Կրթության ոլորտում պետական քաղաքականությունը 2026-ին կիրականացվի 15 բյուջետային ծրագրերի միջոցով:

ԴԱՍԻՉ	ԾՐԱԳԻՐ	2025 մլն դրամ	2026 մլն դրամ	2026 %	2026/2025 %
ԸՆԴԱՄԵՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵ		324,855.5	383,020.9	100.0	17.9
1045	Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիր	13,541.1	16,414.1	4.3	21.2
1111	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր	13,563.4	13,331.5	3.5	-1.7
1130	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	2,087.5	1,884.4	0.5	-9.7
1146	Հանրակրթության ծրագիր	136,310.7	139,719.7	36.5	2.5
1148	Արտադպրոցական դաստիարակության ծրագիր	3,726.3	4,008.7	1.1	7.6
1162	Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	30,009.1	27,296	7.1	-9.0
1183	Ապահով դպրոց	1,696.7	836.7	0.2	-50.7

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Աղյուսակի շարունակություն

ԴԱՍԻՉ	ԾՐԱԳԻՐ	2025 մլն դրամ	2026 մլն դրամ	2026 %	2026/2025 %
1192	Կրթության որակի ապահովում	18,276.9	19,536	5.1	6.9
1189	Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր	14,650	8,706.3	2.3	-40.6
1193	Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում	3,594.3	4,045.3	1.1	12.6
1215	Կրթության,մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում	2,087.5	1.884.4	0.1	-9.7
1227	Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում	923,571.1	876,658.8	0.2	-5.1
1236	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում	100,787.4	140,922.7	36.8	39.8
1238	Նախադպրոցական կրթություն	3,017.4	1,883.7	0.5	-37.6
1240	Ակադեմիական քաղաքի ստեղծում	1,316.5	4,966.4	1.3	277.3

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Կրթության ոլորտի ամենամեծ բյուջետային ծրագիրը Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում ծրագիրն է, որը 2026 թվականին կկազմի Կրթության ոլորտի 36.8 տոկոսը:

- Հաջորդում են Հանրակրթության ծրագիրը՝ 36.5 տոկոս, Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիրը՝ 7.1 տոկոս և Կրթության որակի ապահովում ծրագիրը՝ 5.1 տոկոս:

- Ընդհանուր առմամբ, նշված ծրագրերը 2026 թվականին կապահովեն կրթության բյուջեի 85.5 տոկոսը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Ռեկորդային աճ և ռազմավարական նախագծեր

Ակադեմիական քաղաքի ստեղծում՝ +277.3% աճ

Ամենաբարձր աճը գրանցվել է «Ակադեմիական քաղաքի ստեղծում», որտեղ 2026թ. բյուջեն աճել է 277.3%-ով՝ 1.3 մլրդ դրամից դառնալով մոտ 5.0 մլրդ դրամ:

Բյուջետային կրճատումներ և նվազումներ

Ապահով դպրոց՝ -50.69% նվազում

Ապահով դպրոց (1183) ծրագրի բյուջեն նվազել է՝ 1,7 մլրդ դրամից դառնալով 836,6 միլիոն դրամ:

Դպրոցների սեյսմիկ անվտանգություն՝ -40.6%

Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր 1189 ծրագրի բյուջեն 2026թ. նվազել է 40.6%-ով՝ կազմելով 8.7 մլրդ դրամ:

Նախադպրոցական կրթություն

Նախադպրոցական կրթություն ծրագրի բյուջեն նվազել է 37,6%-ով:

Կրթական ենթակառուցվածքների հզորացում

Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում ծրագրի ֆինանսավորումը 2026թ. կաճի 39.8%-ով:

Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիր

Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիր ծրագրի բյուջետավորումը 2026թ.-ին կաճի 21.2%-ով:

Կրթության բյուջետային ծրագրեր 2025-2026թթ.(տոկոս)

Դասիչ	Կրթության ոլորտի ծրագրեր	2026/2025 %
1240	Ակադեմիական քաղաքի ստեղծում	277.2
1236	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում	39.8
1045	Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիր	21.2
1193	Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում	12.5
1148	Արտադպրոցական դաստիարակության ծրագիր	7.5
1192	Կրթության որակի ապահովում	6.8
1215	Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում	2.9
1146	Հանրակրթության ծրագիր	2.5
1111	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր	-1.7
1227	Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում	5.1
1162	Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	-9.0
1130	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	-9.7
1238	Նախադպրոցական կրթություն	-37.6
1189	Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր	-40.6
1183	Ապահով դպրոց	-50.7

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հանրապետական և Միջազգային առարկայական օլիմպիադաների թիվ

28 և 7

Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով ապահովում, դասագրքերի թիվ

402,069

Ինժեներական լաբորատորիաներում գործող խմբերի թիվ

1044

Կրթաթոշակ ստացող ուսանողների թիվ, մարդ

5207

Տրանսպորտային ծախսերի փոխհատուցում ստացող դպրոցահասակ երեխաների և մանկավարժների թիվ

4574 և 7126

Որակավորման տարակարգ ստացած ուսուցիչների թիվ

1616

Հանրապետական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի հաղթողների և միջազգային օլիմպիադաների եզրափակիչ փուլերի մասնակիցների թիվ

964

ՀՀ բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ առարկաներ դասավանդող ուսուցիչների թիվ

8881

Ատեստավորմանը ընթացիկ տարում մասնակցած մանկավարժական աշխատողների թիվը, մարդ

312

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Կառուցվող և վերակառուցվող մանկապարտեզների թիվ

15 և 1

Կառուցվող մոդուլային և ոչ մոդուլային դպրոցների թիվ

2 և 4

ՀՀ-ում կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրի շրջանակներում կառուցվող մոդուլային և ոչ մոդուլային դպրոցների թիվ

1 և 2

Կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրի շրջանակներում կառուցվող կլաստերների կենտրոն-դպրոցների թիվ

33

Վերակառուցվող դպրոցների

1

Կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրի շրջանակներում կառուցվող դպրոցների թիվ

24

ՀՀ-ում կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրի շրջանակներում հիմնանորոգվող / վերանորոգվող դպրոցների թիվը

74

Դպրոցների լաբորատոր գույքով և կահույքով ապահովում

317

ՀՀ-ում կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրի շրջանակներում կառուցվող կրթահամալիրներ

58

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ . ՊԱՐԶԵՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ - 2026

B4C Budgets for Citizens

Բյուջեներ քաղաքացիների համար

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիր

budgets.am